



«ՓՈՂ ՏՈՒԲԻ ՄԱՆԻ ՏՂՈՅԸ ՈՐ ԻՆՍԻ ՓԱՆ» ԴՈՒԿ ԺԲ 16:


ՀԱՏՈՐ ԺԸ

ԿՈՍՏԱՆԻՆՈՒՊՈԼԻՍ, ՆՈՅՆՄԵՐ 1, 1889

ԹԻԻ 11

ԼՈՋԱՆ

Լոզան քաղաքն է ձինեվրա լճին հիստային կողմը և մյան մը հեռի՝ լճին եզերքէն. Շինուած է ճորտի լեռան կողքին վրայ անոր ստորոտին մտա, մասամբ մը երեք բլուրներու վրայ, և մասամբ մը՝ անոնց մէջտեղերը գտնուող հովիտներուն վրայ: Կապակցեալ է Ուշի հետ որ է անոր նախահանգիտար լճին եզերքին վրայ, կարճ երկաթուղիով մը որոյ կառքերը կը քաշուին գագաթը գտնուող անշարժ մեքենայի մը միջոցաւ: Պատկերին մէջ տեսնուած մեծ շէնքը որ ունի բարձր աշտարակ մը, մայր եկեղեցին է որ շինուեցաւ աւելի քան վեց հարիւր տարի առաջ, և զոր Պապը Նուրադորձեց ի ներկայութեան Հապսպուրկեանց Ռատոլֆի որ Աւստրիոյ արդի կայսերական գերդաստանին պատկանող առաջին կայսրն էր: Պատկերին աջ կողմը երեցողը որ նման է շատ դուռներով երկայն շէնքի, է հովտի մը վրայ ձգուած մեծ կամուրջ մը և իրարու հետ կը կապէ քաղաքին երկու թողերը: Անոր շինութիւնը աւելց իբր յիսուն տարի, և հասարակութեան բացուեցաւ 1844ին: Քաղաքն ունի նաև ակադեմիա մը, ուրկէ ելած են հռչակաւոր անձինք. անոր գլխաւոր շէնքերուն կարգէն են կոյրերու պատասխարտն մը և ընտիր հիւանդանոց մը:



ԼՈՋԱՆ

շատ հաճելի են: Նոյն իսկ քաղաքէն երբ կը նայուի, մարդուս աչքին առջև կը պարզուի լճին և լեռներուն գեղեցիկ տեսարանը: Լոզանի այժմու բընակչաց թիւն է 30,000 է աւելի, և այն է վրոտ նահանգին գլխաւոր քաղաքը:

ՈՍԿԻՆ ՊԱՏՈՒԱԿԱՆ

Բարի անունը տղի մը կամ աղջկան մը համար աւելի կ'արժէ քան որչափ ստապրակ մը լեցուն ստակ. և բարի տղայ մը շատ հաւանական է որ ունենայ բարի անուն: Մարդ կրնայ ժամանակ մը կրել բարի անուն մինչ չա-

լութիւններ կ'ընէ, բայց հաւանական չէ որ երկար աւել անոր բարի անունը. յերեան պիտի ելլէ ճշմարտութիւնը, յերեան պիտի ելլեն անոր չարութիւնները. և այն աղան որ իւր ճարտարամտութեամբ բայց ոչ իւր ուղղութեամբ, համարում ստացած է, որ մը պիտի հասկնայ թէ չարաչար սխալած է:

Չկայ բան մը որ այնքան շահաւոր ըլլայ վերջը, որքան անխախտ ուղղութիւնը և արդարութիւնը: Ոմն որ կը համոզէր տղայ մը ծուռ գործ ընելու, կ'ըսէր, «Ոչ որ պիտի իմանայ»՝ Տղան պատասխանեց, «Բայց ե՞ս ո՞րտէսն եմ» և չըրաւ այն ծուռ գործը:

Շատ գէշ բան է որ մարդ վատ բաներ գիտնայ իւր վրայ. և այն անձը որ վատ բաներ կը գործէ, պիտի յիշէ զանոնք ճիշդ այնպիսի ժամանակ մը երբ կ'ուզէր մոռցած ըլլալ:

Շատ մը աւելի դիւրին է ուղիղ գործել քան ծուռ գործել և խորհիլ

տալ մարդոց թէ ուղիղ կը գործես։ Այս օր հարիւրաւորներ կան բանտի մէջ որ կրնային ազատ ըլլալ և հարուստ և յաջող վիճակի մէջ եթէ կիսով չափ աշխատութիւն տային ուղղութիւն ընելու համար որչափ տուած են ծուռ գործելու և չընտելու։ Որչափ ընտիր արհեստաւորներ բանտերու մէջ կը պահուին, որք եթէ ըլլային ուղիղ և հաւատարիմ, իրենց ուզած վարձքը կ'ընդունէին և կ'ըլլային պատուաւոր և հարուստ, փոխանակ բանտերու մէջ փակելու։



ՍՈՒՐԶԱՆԳԱԿԻ ԿԱՌՔ

Որչափ դիտենք, սուրհանդակի կառքը անժանօթ է թուրքիոյ մէջ։ Տէրութեան շատ կողմերը կառքոց տղու որ ճամբաներ կը շատնան, և ճանապարհորդը կրնայ կառք վարձել յատուկ իրեն համար. բայց սուրհանդակի կառքը սարքեր է ասկէ։ Ունի սահմանեալ ճամբայ մը, ճամբայ կ'ելլէ սահմանեալ ժամու մը մէջ։ Նաև իւրաքանչիւր ճանապարհորդի համար կը տուած է վարձու սահմանեալ գին մը ճամբորդութեան երկայնութեան համեմատ, ճիշդ ինչպէս որ է երկաթուղեաց համար։

Մինչ մանուկ էի, մեր տունը կը գտնուէր գիւղի մը մէջ սուրհանդակի ճամբուն վրայ Նիւ Եորքի և Պոսթըրի մէջտեղ, և ամէն օր երկու կողմէն ևս անցնող սուրհանդակք կանգ կ'առնուին գիւղին նամակատան առջև։ Այն էր մեծ կառք մը որ թերեւս կրնար պարունակել ասար տասներկու անձինք, և կը քայուէր չորս կամ վեց ձիերով։ Շատ սիրուն կ'երևէր մինչ արագ կ'անցնէր գիւղին մէջէն, և գիւղացի շատ պատանեաց փափաքելի մեծագոյն բանն էր սուրհանդակի կառք վարող ըլլալ երբ մեծնային։ Բայց այն ինչ կատարելագործուեցաւ երկաթուղին, սուրհանդակի պէտք չմընաց, և քառասուն տարիէ աւելի է որ այլ ևս չեն տեսնուիր անոնք այն կողմերը։ Ոչ ոք կ'ուզէ շաբաթ մը ժամանակ տալ ճամբորդութեան մը համար զոր հնար է կատարել աւելի հանգիստ կերպով վեց ժամու մէջ։

Մեր առջևի պատկերէն կը հասկըցուի թէ սուրհանդակի կառքերն ինչպէս էին Աւստրալիայ նախկին օրերուն մէջ։ Առաջինը կը ցուցնէ կից հարկանոց (իւէֆֆէ Է-բա) ձի մը, երկրորդը՝ գիշերուան անցք մը անտառի մը մէջէ, և երրորդը՝ անցք մը փոքր հոսանքի մէջ։


Սուրհանդակի կառքը կը թուի թէ ճամբորդելու համար ապահով միջոց է, բայց իւր կրած անձառնց թուոյն նու-

յերով, անոր վրայ պատահած արկածներուն թիւը աւելի մեծ է երկաթուղեոյ վրայ պատահածներէն։ Սակայն եթէ մարդուս ժամանակը ներքէ ճամբորդել սուրհանդակի կառքով աւելի ազնի կրնայ տեսնել դիտել իւր շուրջը գտնուած տեսարանները։

ՄՕՐԸ ՀԱՆԴԵՐՔՈՒՄ ՄԷԿ ԿՏՈՐԸ

Խու մը մը աղքատ տղաք քաղաքին նեղ փողոցներէն և տուներուն ձեղձի սենեակներէն ժողովուած էին երթալ նոր տեղ մը որպէս պատրաստած էին բարերար անձինք։ Շողոկեալ քին ճամբայ ելլելէն քիչ մը առաջ, տղոց մէն մին կը տեսնուէր մէկ կողմ քաշ-

ուած, և շատ զբաղեալ կը թուէր նետուած վերարկուի մը վրայ։ Տեսուչը մտածեցաւ անոր և հասկցաւ որ աղան կը հանէր յիշեալ հանդերձին վրայ ձգուած կարկոտաններէն մին։ Տղին ձեռքը գտնուած այն հանդերձն էր իւր հինցած վերարկուն, որ մէկդի ձգուած էր վասն զի նոր մը հագած էր նա։ Պէտք չէր ժամանակ կորսընցունել։ «Իհուր, Յոննիկ, եկուր. ի՞նչ պլաի ընես այդ սպաժոյնին կտորը։» «Ներեցէք տէր իմ, կը հանեմ զայն որպէս զի հետ տանիմ։ Իմ սիրելի մայրիկս ձգեց այս կարկտանը այս հին վերարկուին վրայ։ Սա անոր հանդերձն կտորն էր, և միայն այս է որ ու-



ՍՈՒՐԶԱՆԳԱԿԻ ԿԱՌՔ

նիմ իմ քով մայրիկս յիշելու համար :” Եւ խեղճ տղան մինչ կը մտածէր իւր սիրելի մօր սիրոյն վրայ , և այն ախար մահաւան անկողնոյ տեսարանին վրայ ձեզունի հին սենեկին մէջ ուր մեռած էր մայրը , ծածկեց իւր երեսը ձեռուրներովը , և սկսաւ հեկեկալով լալ սիրաբար շատ կտորած : Բայց չղեկաւքը շուտով ճամբայ պիտի ելլէր . Թոննիկ տպածոյն փոքրիկ այն կտորը ծոցը դրաւ , որպէս զի անով յիշէր մայրը , վազեց մտաւ երկաթուղոյ կառքերէն մէկուն մէջ , և շուտով հեռացաւ այն տեղէն ուր այն չափ վիշտ տեսած էր :

Իմ փոքրիկ բարեկամս , ժամանակ կու գայ երբ մայրիկէդ ուրիշ բան պիտի չմնայ քեզի բայց միայն անոր հինցած վերարկունքը : Կ’ուզե՞ս սիրել մայրիկդ աւելի շատ քան որչափ կը թուի թէ կը սիրես հիմա : Կան քանի մը բաներ զորոնք յիշելը ցաւալի է և մոռնալը՝ դժուարին . և այն սղաքը որ ըրած չեն բոլորը ինչ որ կրնային ընել իրենց խեղճ և յողնած մայրերուն համար , որ պիտի գայ երբ շատ պիտի զղջան :

Վ. Ա. Գ. Բ. - 02

Շանաձուկէն ետքը որ կը բռնէ զմարդ գեռնա չիմացած , թերեւս չկայ աւելի սուկալի կենդանի մը քան որչափ թունաւոր օձը : Այս օձը ոչ միայն կը կրէ այն մահացուցիչ զէնքը , թոյնը , այլ մարդասպանի մը պէս կը պահուի դարանակալ կ’ըլլայ , և յանկարծ կը յարձակի մարդուս վրայ տակաւին սա չիմացած անոր հան դանուիրը :

Բայց օձերուն մեծ մասը անվնաս են . և օձէ խայթուելով մեռնողներ գրեթէ անծանօթ են թուրքիոյ մէջ : Թունաւոր օձերուն ալ շատին խածուածքը թէպէտ ցաւեցունող է բայց սովորաբար մահաբեր չէ : Այս յողուածը դրողին հայրը , երբ երիտասարդ էր , անպամ մը խայթուեցաւ Հիւսիսային Ամերիկայի ամենէն չաթաթոյն մէկ օձէն : Օձը խածած էր անոր պզտիկ մատին ծայրը . և ամբողջ բազուկը ուռեցաւ և գոյնը փոխեց : Մարդ մը որ ժամանակաւ Ամերիկեան Հնդկացի մէջ բնակած էր , գնաց անտառը , և ժողովեց քանի մը խտտեր և անոնցմով շինեց դեղ մը որով ուռեցքը իջաւ և հպարտ կորսնցուց միայն իւր մատին ազալին յողուածը :


Հնդկաստանի ֆոպրա կոչուած օձին թոյնը գրեթէ միշտ մահաբեր է . և իբր 25,000 անձինք ամէն տարի կը սպաննուին յիշեալ երկրին մէջ այդ

օձին խայթուածքէն : Սոյն պատկերը կը ներկայացունէ Աւստրալիոյ վագր-օձը , որ ամենէն թունաւոր օձն է յիշեալ ցամաքին : Ամառուան եղանակին մէջ երբ նա ամենէն աւելի շատ թոյն կ’ունենայ , չափահաս վագր-օձի մը խայթուածքը կը մեռցունէ շատ արագ : Լաւագոյն դարմանն է անմիջապէս կտրել խայթուած մասը : Կը պատմուի թէ Աւստրալիացի պատանիք երբ կը խայթուին , կ’առնուն իրենց զմեղինները և կը կտրեն կը հանեն իրենց մէկն մաս մը , և մինչև անգամ կը կրարեն իրենց մատին յողուածն ամբողջ : Երկրորդ լաւագոյն դարմանն է , կտրելով բանալ վերքը , և թողուլ որ ազատ վազէ թունաւորուած արիւնը , այնուհետև հրաշքէ երկաթով այրել վերքը :

խմել : Տղան պատասխանեց , «Ոչ . ինձի աղէկ չըլլար այդ , ես պարտիմ նուաճել իմ մարմինս :”

Ենդեան տօնին այս տղան որուն անունն էր Լէմուէլ Բարեսէր , ընդունեց տուփ մը պատու և անուշեղէններ հեռի քաղաքէ մը : Բաւ ինքն իրեն , «Բարեկամներուս հետ պիտի տեսմ այս բարիքները :” Հրաւիրեց և իւր բարբառքը ժողովեց խումբ մը տղաք և աղջիկներ , և առատաձեռնութեամբ տուաւ այն ուտելիքներէն : Նաև կանչեց աղքատ տղաք որ չունէին բարեկամներ , և զանոնք ալ մասնակից ըրաւ իւր բարիքներուն : Վասն զի մեծ սիրտ ունէր նա : Եթէ միայն ինք ուտէր այն նուէրները , գրեթէ պիտի խեղդուէր :

Արդ , մերձականները կը գտնուէր սըղայ մը Գեղէնն Կծծի անուն , որ նուէր



Վ. Ա. Գ. Բ. - 02

Ա. Ռ. Ա. Կ. Մ. Ե. Տ. Ա. Ռ. Ն. Հ. Ա. Մ. Ա. Բ.

Ա. կ. ր. Թ. 27:

Տղայ մը ձին հեծած ջուրը տարաւ զայն : Երբ ձին խմեց ջուրը , ըսաւ , «Հիմա քիչ մը խաղանք :” Եւ սկսաւ ցատկաւելի վազվազել , և ինչ որ կրնար ըրաւ տղան իւր կռնակէն վար նետելու համար : Բայց տղան հաստտա կեցաւ ձիուն վրայ : Նա էր անշուշտ ընտիր ձի հեծնող մը : Օր մը մինչ այս տղան կը ճաշէր , հայրը ըսաւ անոր , «Տղաս , յիշէ ինչ որ ըսած է Սուրբն Պօղոս , «Մարմինս կը նուաճեմ :” Տղան ըսաւ , «Ի՞նչ կը նշանակէ այդ , հայր :” «Կը նշանակէ ,” ըսաւ հայրը , «չափազանց մի ուտեր , ստամբար շատ մի լեցուներ . մի գոհացուներ քու մարմնային պէտքերդ զոհելով խիղճդ և հողիդ :”

Այն ատեն տղան միտք բերաւ իւր ձի հեծնելը , և տեսաւ թէ ինչպէս պէտք էր իջնել իւր ախորժակաց և կրից վրայ ճիշդ ինչպէս որ այն ձին հնազանդեցուցած էր իրեն :

Օր մը մարդ մը առաջարկեց անոր հետ գինետուն մը երթալ և քիչ մը

ներ ընդունած էր ճիշդ Լէմուէլի նման : Բայց փոխանակ անկէ վայելելու , ապահով տեղ մը դրաւ և կղպարի տակ պահեց զայն , մինչև որ բոլոր նուէրք որ պատուէր , աւրեցաւ և անոր քաղցրութիւնը անցաւ , թողուցաւ և չորցաւ : Վասն զի նա էր նորահասակ ագահ մը :

Եւ սակայն ուրիշ աղայ մը որ կը կոչուէր ձոն Որկիւմալ , երբ որ մը ընդունեց աղուոր ուտելիքներ , բոլորը կերաւ մէկ աւուր մէջ , այնպէս որ յետոյ շատ հիւանդացաւ : Կանչուեցաւ Տոբթոր փրնա քրնա , որ տուաւ ձոնի շատ լեղի դեղ մը , և ըսաւ , Երանի՛ թէ այնպէս շատակեր չըլլայի :

Ձոն իւր մարմինէն նուաճուեցաւ : Գեղէնն անկէ շատ տարբերութիւն չունէր : Բայց Լէմուէլ իւր մարմինը կը նուաճէր :

ՍՈՒՏՈՎ ՄԵ ՍՊԱՆՆՈՒՄՍ

Մարդ մը որ ձի հեծած արագ կ’երթար կանչել բժիշկ մը , փոքրիկ աղու մը հարցուց թէ ս’րն էր ճամբան Տղան

կատակի համար իւր մատով ցուցուց սխալ ճամբայ: Մարդը չկրցաւ գտնել բժիշկը, և մեռաւ իւր որդին: Յուդարկաւորութեան պաշտօնին մէջ քարողիչն ըսաւ, «Սյս տղան սպաննուեցաւ սուտով մը զոր ուրիշ տղայ մը խօսեցաւ իւր հօրէն» Սյս մի խօսիք, տղաք, ինչ և ըլլայ շարժառիթը:

Հօրմէ որք փոքր տղայ մը դեղարանի մը մէջ կ'աշխատէր որպէս գի օգտակար անձ մը ըլլար: Օր մը երբ զրկուեցաւ տեղ մը գործի մը համար, սխալ մը գործեց և ուստի ըսեց խիստ յանդիմանութիւն: Ասկէ ստացաւ երկչոտ բնաւորութիւն մը. երբ հրամայուեցաւ իրեն վերցունել քանի մը բաներ, անոնց մին գետինն ինկաւ ձեռքէն և կտրեցաւ: Իւր վարպետը հրամայեց որ սուռն երթար. չեմ ուզեր, ըսաւ, այսպիսի ապուշ, անզգայ տղայ մը իմ խանութիս մէջ: Այլիացեալ մայրը միթիթարեց զնա երբ տղան հեկեկալով պատմեց իւր վաճառուիլը: Քանի մը օր ետքը տղան գնաց գտնել ուրիշ տեղ մը: Ստանան փափոսաց տղին ականջին ըսել թէ անկէ առաջ մտած չէր ուրիշ որ և իցէ տեղ մը, վասն զի յանձնարարական կամ վկայագիր չունէր: Բայց տղան հաստատ որոշեց բան մը չպահելով պատմել ինչ որ պատահած էր. և մարդը այնչափ հաճոյք զգաց անոր անկեղծ խոստովանութենէն՝ որ իւր քոյն առաւ զնա: Ճիշդ այն ատեն խանութէն ներս մտաւ տղին առջի վարպետը, և ըսելով անոր վրայով թէ ինչ տեղի ունեցած էր, ըսաւ անոր վարպետին թէ բնաւ ունեցած չէր անկէ աւելի լաւ, աւելի ուղիղ, աւելի վստահելի պատանի մը իւր գործին մէջ, և թէ շատ անգամ կը ցաւեր անկէ բաժնուելուն համար որոյ պատճառն էր իւր կիրք ելլելը:

ԿՕՇԻԿ ՆԵՐԿՈՂ ՓՈՔՐԻԿ ՏՂԱՆ

Ասկէ հարիւր տարի առաջ փոքրիկ տղայ մը կը գտնուէր Անգղիոյ Օքսբօքստ քաղաքին մէջ, որոյ գործն էր տեղւոյն հոշակաւոր համալսարանին ուսանողաց կօշիկները ներկել: Տղան աղքատ էր բայց արթուն և վառվռուն:

Անունն էր ճորճ, և շուտով սիրելի եղաւ ուսանողաց: Իւր գործեր կատարելու մէջ ցուցած արագաշարժութիւնը և հաւատարմութիւնը գրաւեցին ուսանողաց զմայլումը: Տեսանալով մէջ ազնիւ մարդ մը լինելու նշանները, և առաջարկեցին անոր՝ մէկ մէկ քիչ բան սորվեցունել ամէն օր: Ճորճ սորվելու փափաք ունենալով՝ ընդունեց անոնց առաջարկութիւնը, և շուտով անցաւ իւր ուսուցիչներէն իւր արագ յառաջդիմութեամբ: «Տղայ մը որ լաւ կը ներկէ կօշիկ, լաւ կ'ուսանի», ըսաւ ուսանողներէն մին: «Տատակի պէս սուր», ըսաւ ուրիշ մը, և բաւական քաջ՝ դիւցաղուն մը լինելու յարմար:»

Բայց մեր տեղը չներեր որ պատմէինք անոր համբերութիւնը և յարատւութիւնը: Յառաջ գնաց նա քայլ առ քայլ, մինչև որ եղաւ մարդ, ուսեալ և պերճախօս մարդ մը, որ կը քարոզէր Աւետարանը զմայլով հազարաւորներու:

Այս կօշիկ ներկող փոքրիկ աղան եղաւ թերևս Անգղիոյ պատմութեան մէջ գտնուող ամենէն համբաւաւոր քարոզիչը, ճորճ Հուայթֆիլս:

ՀԱՌԱՍԱՐԻՄ ՏՂԱԲ

ՈՐչափ հոգէ և տագնապէ նաև աշխատանքէ կ'աղաատուի մարդ երբ տղաք հաւատարիմ կ'ըլլան: Եթէ անոնք հաւատարմաբար կատարեն ինչ որ կը պատուիրուի իրենց, բան մը չմտնալով, բան մը զանց չընելով, իրօք օգնականներ կ'ըլլան: Այսպիսի տղոց մարդ կրնայ վստահիլ և ապաւինիլ. և երբ ստիպողական գործ մը պատահի, և պէտք ըլլայ հաւատարիմ և վստահելի անձ մը, ահա ա՛յն ժամանակ կը ճանչցուի անոնց արժանիքը: Բայց այնպիսիք որ միշտ կը մոռնան, միշտ զանցառու կը գտնուին, միշտ կ'ըսեն, «Միտք ունէի ընել», կամ, «Միտք չունէի ընել», իրենց կեանքին մէջ միշտ սխալներ կը գործեն, և ոչ իրենք հանգիստ կ'ունենան, ոչ ալ օգտակար կ'ըլլան այլոց: Մեծ բան է ունենալ տան մէջ հաւատարիմ և վստահելի տղայ մը. յաւալի է ունենալ անհանդարտ և կա-

մակոր տղայ մը որ չարիք կ'ընէ, սխալներ կը գործէ, և նեղութիւն կու տայ ամէն տեղ:

«Չէի խորհած» ըսելը ողորմելի պատասխան է: Մարդ պարտի խորհիլ: «Մոռցայ», ըսելը ողորմելի պատճառանք է: Ոչ ոք պէտք է մոռնայ այն բաները որոց հոգ տանել իւր պարտականութիւնն է: Տղայ մը չմոռնար իւր սիրած բանը: Ո՞վ կը ճանչնայ տղայ մը որ ձկնորսութեան երթայ և մոռնայ իւր խայծը (չնո՛ւ կե): Ո՞վ կը ճանչնայ աղջիկ մը որ մոռնայ իւր ժապակէները և զարդերը: Մարդիկ կը մոռնան իրենց կատարելու գործերը, վասն զի հոգ չեն ունէր անոնց համար: Միտք պահելու միջոցն է հոգ ունէլը. և եթէ մենք հոգ տանինք մեր կերպերուն և գործին, պիտի չմոռնանք կատարել մեր պարտականութիւնները:

ՊԱՏԱՍԽԱՆ ՀԱՆՆԵԼՈՒԿԻ

Սեպտեմբեր ամսոյ հանկուկին պտտախանն է, «Քուռը մի սերեր որ չըլլայ թէ աղքատանաւ աչքերդ բաց որ հացով կշտանաս» Առաւ. Ի. 13: Բանալի եղող բառերն են՝ Եղիտ, Կերտ, Յեւթամ, Աքանջիկ, Բնուցք, Գարեհ, Որսայ, Յորեան, Դարաթ, Տոլը, Բաւ, Լա:

Զոր լուծեցին, Պարտիզակ. — Միքայէլ Ս. Գաբրիէլեան: Ահն. — Աբէլ Ն. Ժամկոչեան: Մարտան. — Յ. Աըշուրի Գ. Քէմալեան: Կարին. — Հայկազուն Յ. Թաշճեան:



ՀԱՆՆԵԼՈՒԿԻ ՍՈՒՐԲ ԳԻՐՔԷՆ

Իմ բառ առաջին է մի գոյական Որ անհրաժեշտ պէտք է տան մը գրան, Իսկ իմ բառ երկրորդ՝ տեսակ ինչ բայի, Գեմբով առաջին, թուով երկու, Եթէ գտնուին բառերն այս երկու Եւ յարմար կարգաւ կըցուին իբարու, Ահա մի անուն անըզգամ աւըն Որ թշամանեց զգեաւայ Տեսաւն:

Մարտան 8. ԱՐԵՍԻՐԻ Գ. ՔԵՄԱԼԵԱՆ

Ամերիկայի Միտինսթրաց ընկերութեան կողմէն, Արտոնաւորութիւն Գ. Ք. ԿՐԻՆ Տնօրէն—Խմբագիր Հ. Ա. ՊԱՐՆԸՄ Տննաւարտը կ'օգուտու, Ամերիկայի Իստ:

ԿՈՍՏԱՆԴՆՈՒԴՈՒՆՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ Ա. ՊԱՅՐ ԳՕՏԵՍՈՆ